



Ժ. ՓԱՓԱՉՅԱՆ

Հ Ա Յ Ի Ե Ն Ի Ք Ի Ս

Երգել եմ քեզ, հանախ երգել՝ որպես անուշ, որպես երագ,
Տենչանքների ծնունդ շքեղ, դու ոսկեափ Եղեմ անհաս,
Անգո կայան երանության, ուր պիտի գա մի օր հոգիս
Խոնջանք փնտրել, ազատ շնչել ու վերջ գտնել խուլ մորմոխիս...

Այնքա՛ն, այնքա՛ն արտասովել եմ ես քեզ համար, քո ցավի հետ,
Երբ ապաստե՛ր մարդկանց զրկում զգացել եմ ես ինձ օտար,
Երբ զրկանքի քամին փչել ու տարել է ինձնից անհետ
Լույս հավատը քո զարթոնքի և իմ հույսը անմխիբար:

Կուրծք եմ տվել տառապանքի մրրիկներին աշխարհացրիվ
Ու կասկածի խավարի մեջ խարխափել եմ անօգնական,
Հանախ ընկել, կրկին կանգնել, հաղթել, պարտվել եմ անհաշիվ,
Քե՛զ եմ երգել, քե՛զ ողբացել, քե՛զ տենչացել, ի՛մ Հայաստան:

Ու երգում եմ, նորից երգում քե՛զ, Հայրենի՛ք իմ փառակերտ,
Գու ապրում ես, կաս երկնի տակ քո մեծ սրտով միլիոնատուրով,
Մեր կապն այնքա՛ն է հարազատ, այնքա՛ն ամուր, այնքա՛ն է սերտ,
Ու ես ձուլվում եմ, տե՛ս, քեզ հետ ու չեմ լինի այլևս որբ:

Սիրում եմ քեզ անհուն սիրով, ո՛վ մարմնացած երագ շքեղ,
Եվ երգում եմ քո կյանքը հոր, ստեղծագործ նիգդ խաղաղ,
Էլեկտրավազ խոյանքն անհաս քո կերտումին երկնասլաց,
Քո՛ հնավանդ մշակույթի վերափրկումն աննախընթաց,

Մկանակոտ տղաներից աշխատանքի խանդն առնակալն,
Մերկավարս ալջիկներից անկասելի Լուսնը ժիւր,
Խաղաղատենչ մարտիկներից հայրենապահ ուժն հաղթական,
Ու լուսամիտ ֆերոդներից փանաբախույց հանճարն անձիւր:

Ու տենչում եմ միախառնել նրանց ջանքին արգասավանդ,
Ո՛չ լաց ու կոծ, ո՛չ վիշտ ու ցավ, այլ տնադարձ երգ ու եռանդ,
Կարոտավառ հոգիս պարզած լայնածածան դրոշի նման,
Զգտում եմ քե՛զ, քե՛զ հետ ձուլվում, ի՛մ Հայրենիք, ի՛մ աննման:

Պիպիկի

